



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՑԻ  
Diocese of the Armenian Church of America  
(U.S.A. AND CANADA)

Archbishop Torkom Manoogian, Primate 630 Second Avenue, New York, N.Y. 10016

ՎԱՀԱՆ Ս. ԳՐԻ. ՔԵԾԻՆԵԱՆ

Առաջնորդական Փոխանորդ

RT. REV. VAZKEN KESHISHIAN  
Vicar General

ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԳԱՆԱՏԱՑԻ  
VICARSHIP OF CANADA

HOLY TRINITY ARMENIAN CHURCH  
14 WOODLAWN AVENUE, WEST  
TORONTO, ONTARIO M4V 1G7  
TELEPHONE: 964-3286

Մեպտ. 19, 1979

Պարոններ,

Որպէս Գանատայի Փոխանորդ եւ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն եւ Ս. Խաչ Եկեղեցիներու անմիջական նախագահը, ըստ մեր Թեմի կանոնադրութեան, անոնց ծխական Խոր հուրդներն ու յարակից բոլոր մարմինները կու զան մեր իշխանութեան եւ պատասխանատուութեան ներքեւ: Իրենց գործունէութիւնները պէտք է մեր վաւերացումին ենթարկուին:

Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը մէկ շաբաթ առաջ մեզմէ արտօնութիւն խնդրեց Պէտք Սէթէ կատարել, եւ մենք արտօնեցինք:

Երէկ առաւտ լսեցինք որ Ս. Խաչ Եկեղեցւոյ յարակից Տիկնանց Մարմին մը առանց մեր գիտութեան նոյն օրերուն նոյն վայրին վրայ նոյնպիսի Սէթէ մը պիտի կատարէ եղեր: Վերջին քսան չորս ժամերուն ժամանակ տուինք որ յանուն համերաշխութեան Դուք յարմար որոշում մը առնէք: Բայց դժբախտաբար այդպէս չեղաւ:

Արդ, եթէ սոյն Տիկնանց Միութիւնը ոեւէ ձեւով մաս կը կազմէ Ս. Խաչ Եկեղեցւոյ, հետեւաբար կ'իյնայ մեր իշխանութեան ներքեւ եւ մենք այս անզամուան համար կ'արգիլենք որ սոյն Պէտք Սէթէ կատարեն, իսկ եթէ կ'առարկեն որ իրենք Ս. Խաչ Դպրոցին համար կ'ընեն: Եթէ Ս. Խաչ դպրոցը մասն է Ս. Խաչ Եկեղեցւոյ, հետեւաբար ենթակայ մեզի եւ կամ Ս. Խաչ դպրոցը մեզի ենթակայ չէ, ուրեմն մենք ոեւէ ձեւով յանձնառու չենք կընար ուլալ անոր բարոյապէս կամ նիւթապէս գօրավիգ կանգնելու:

Սոյն յայտարարութիւնը կը կատարենք ի սէր համերաշխութեան եւ ապագայ սիրալիր գործակցութեան ոգիէն մղուած:

*Տիկնանց Տ. Վրիգ Քահանա*

Ակազմէն ծ. Վրիգ Քէշիշեան  
Առաջնորդի Փոխանորդ Գանատայի

Օրինակներ՝

Ս. Երրորդ. Հայց. Եկեղեցւոյ ծխական Խոր հուրդ  
Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ Առժամեայ ծխական Խոր հուրդ  
Ս. Երրորդ. Հայց. Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան  
Ս. Խաչ Վարժարանի Խնամակալութեան